ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

N o 1499-Ա/2 «27» հոկտեմբերի 2020 թ.

ԵՐԵՎԱՆԻ «ԼԵՈՆԻԴ ԱԶԳԱԼԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 200 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ «ՊԱՐՍԿԵՐԵՆ» ԱՌԱՐԿԱՅԻ 5-9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԸ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 14-ի N 1144-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ**

Երևանի «Լեոնիդ Ազգալդյանի անվան թիվ 200 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Պարսկերեն» առարկայի 5-9-րդ դասարանների ծրագրերը որպես օտար լեզու երաշխավորել գործածության՝ համաձայն հավելվածի:

**ՆԱԽԱՐԱՐ** **ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

X ____________________

*Հավելված*

**ՀՀ կրթության, գիտության,**

**մշակույթի և սպորտի նախարարի**

**2020 թ.----------------- N 1499-Ա/2 հրամանի**

# ՊԱՐՍԿԵՐԵՆԻ
# ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

/1.5 - 2 ժամ/

(V-IX ԴԱՍԱՐԱՆՆԵՐ)

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

# ՊԱՐՍԿԵՐԵՆ

ԵՐՐՈՐԴ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ

(շաբաթական 1,5 ժամ, տարեկան 51 ժամ)

(շաբաթական 2 ժամ, տարեկան 68 ժամ)

Պարսկերենը պատկանում է իրանական լեզուների արևմտյան խմբին, մյուս բոլոր իրանական և հնդկական լեզուների հետ միասին կազմելով հնդեվրոպական լեզվաընտանիքի հնդիրանական կամ արիական ճյուղը: Պարսկերենը վերլուծական տիպի լեզու է:

Ժամանակակից պարսկերենում բացակայում են հոլովական կարգը, սեռի քերականական կարգը, անվանական խոսքի մասերի շարահյուսական հարաբերությունները արտահայտվում են վերլուծական տարբեր միջոցներով՝ նախդիրներով, ետադրությունով և իզաֆեթային կապով: Ժամանակակից պարսկերենում մեծ փոփոխությունների է ենթարկվել նաև բայական համակարգը, որն էլ պահանջում է պարսկերեն լեզվի դասավանդման յուրահատուկ մոտեցում՝ անշուշտ պարտադիր համեմատականներ անցկացնելով մայրենի լեզվի հետ:

Պարսկերենը, որպես երրորդ օտար լեզու, Լեոնիդ Ազգալդյանի անվան հ. 200 հիմնական դպրոցում դասավանդվում է 5-րդ դասարանում ԻԻՀ հանրակրթական դպրոցների համար նախատեսված գրականությամբ, իսկ 6 – 9-րդ դասարաններում ՀՀ հանրակրթական դպրոցների համար նախատեսված դասագրքերով՝ լույս տեսած ՀՀ Իրանագիտական Կովկասյան Կենտրոնի կողմից:

## 5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Երրորդ օտար լեզվի ուսուցումը բաժանվում է երկու փուլերի՝ նախաայբբենական և այբբենական (տառուսուցման): Նախաայբբենական փուլը կառուցվում է բանավոր խոսքի հիման վրա: Այս փուլի նպատակը տարրական հաղորդակցական կարողություններ ձևավորելն է: Այդ տարիքի աշակերտներն արդեն ունեն որոշակի հաղորդակցական կարողություններ, որոնք թույլ են տալիս շփվել միմյանց հետ մայրենի և ռուսերեն լեզուներով, ինչպես նաև որևէ օտար լեզվով: Սա նպաստավոր գործոն է երրորդ օտար լեզվով հաղորդակցական կարողություններ ձևավորելու համար:

Նախաայբբենական փուլում անհրաժեշտ է սովորողին հոգեբանորեն նախապատրաստել նոր լեզվական միջավայրին և նրա մեջ դրական վերաբերմունք ձևավորել երրորդ օտար լեզվի նկատմամբ՝ հենվելով մայրենի և արդեն ուսուցանվող օտար լեզուներից ունեցած նրա փորձառության վրա: Ուսուցման այս փուլում տեղի է ունենում ոչ միայն աշակերտների նախնական հաղորդակցական կարողությունների ձևավորում (խոսել, ունկնդրել), այլ նաև, շատ ընդհանուր գծերով ծանոթություն արտասահմանցի իր հասակակիցների աշխարհին: Այսպիսով ստեղծվում են նախադրյալներ միջմշակութային հաղորդակցման համար՝ հաշվի առնելով աշակերտների պահանջմունքները, հետաքրքրությունները, տարիքային և անհատական առանձնահատկությունները:

Նախաայբբենական փուլում նախընտրելի է որպես ուսումնական գործունեության տեսակ կիրառել վանկախաղը, հնչյունային վարժանքները (անհատական, խմբային), որոնց միջոցով ձևավորվում են դպրոցականի հաղորդակցական կարողությունները:

Այբբենական (տառուսուցման) փուլը կառուցվում է տառերի ուսուցման, նախնական՝ պարզ, համառոտ, հետագայում՝ արդեն բարդ, ծավալուն տեքստերի ընթերցման, գրավոր աշխատանքների հիման վրա: Զուգահեռ ուսուցանվում են նաև բանաստեղծություններ, երգեր:Ինչպես նաև այս փուլում իրականացվում է պարսկերենի խոսքի մասերի շուրջ նախնական գիտելիքների ուսուցում:

Հարկ է նշել, որ պարսկերենի այբուբենի դասավանդման թեմատիկ բովանդակությունը՝ ըստ ուսումնառության շաբաթների՝ համապատասխան առանձին թեմաներով: Այն ավելի մանրամասն ներկայացվում է ուսուցչի դասավանդման առանձին թեմատիկ պլանի մեջ:

| հ/հ | Թեմա | | Ժամերի քանակը 51 | Ժամերի քանակը 68 |
|---|---|---|---|---|
| 1 | Ծանոթություն պարսկերեն լեզվի, Իրանի և իրանցիների (ընդհուպ քարտեզում Իրանի տեղի, հայ-իրանական բարեկամական հարաբերությունների) հետ: Ողջույն-հրաժեշտ: Որպիսության հարցում: Իմ մասին. անուն, տարիք, Իմ ընտանիքը, ծնող, քույր, եղբայր | Ձևավորել և զարգացնել նախնական հաղորդակցական կարողությունները՝ խոսքային գործունեության բոլոր տեսակներում (ունկնդրել, խոսել, ընթերցել և գրել) տրված թեմաների և հաղորդակցության հետևյալ հիմնական ոլորտների շրջանակներում, անհրաժեշտության դեպքում գրել որոշ բառերի տառադարձումը՝ ելնելով պարսից լեզվի առանձնահատկություններից: | 1 | 1 |
| 2 | Դպրոց Ես, իմ դպրոցը և դասարանը Գրենական պիտույքներ, շրջապատող առարկաներ Թվական-1-10 | Հաղորդակցության հիմնական ոլորտները – կենցաղային (առօրյա հաղորդակցական վիճակներ) | 4 | 4 |
| 3 | Ընտանի և վայրի կենդանիներ, | | 2 | 2 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | թռչուններ | | | |
| 4 | Կրկնո | | 6 | 8 |
| 5 | Պարսկերենի այբուբենի դասավանդում (տառուսուցում)<br>Տեքստերի ընթերցում, թարգմանություն | | 36 | 51 |
| 6 | Թեմատիկ գրավոր աշխատանք | | 1 | 1 |
| 7 | Կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանք | | 1 | 1 |

| **Ուսուցանվող նյութ** | **Ուսուցման/ուսումնառության նպատակները** | **Ուսումնական գործունեության տեսակները** |
|---|---|---|
| Հնչյուններ, հնչյունակապակցություններ<br>Բառեր, բառակապակցություններ<br>Խոսքային նմուշներ<br>Նախնական պարզ, համառոտ, հետագայում ծավալուն տեքստեր՝ լսելու և խոսելու համար<br>Բանաստեղծություններ<br>Նկարազարդ տեքստեր | - Օտար լեզու (պարսկերեն) սովորելու համար դրդապատճառների ստեղծում<br>- Օտար լեզվի (պարսկերեն) և երկրի (Իրան) մասին նախնական տեղեկությունների հաղորդում:<br>- Պարսկերեն բանավոր խոսքի տարրական հմտությունների ձևավորում (ունկնդրել, խոսել)՝ տրված թեմաների շուրջ երկխոսություններ վարելու, իր, ընկերների, ծնողների մասին ոչ ծավալուն տեղեկություններ հաղորդելու նպատակով: | դերախաղեր<br>խաղեր, երկխոսություններ |

| | | |
|---|---|---|
| **Արտասանություն (ուղղախոսություն)** | **Ձևավորել ընկալողական-արտասանա կան հմտություններ և ճիշտ հնչերանգի պահպանման կարողություններ:** | |
| Պարսկերենի հնչյունային համակարգը.<br>- ձայնավոր և բաղաձայն հնչյուններ.<br>- երկար և կարճ ձայնավորներ<br><br>-Նախադասության հնչերանգը (պատմողական, հարցական, հրամայական, բացականչական)<br>-Պարսկերենի այբուբենը, տառեր, տառակապակցություններ | Կարողանալ ճանաչել և վերարտադրել պարսկերենի ձայնավոր և բաղաձայն հնչյուններն ու հնչյունակապակցությունները ձայնավորը՝ որպես վանկարար հնչյուն<br>կարճ-երկար ձայնավորները, որպես իմաստատարբերակիչ արժեք ունեցող գործոն<br>Կարողանալ հարաբերակցել հնչյունները և տառերը, տառամիասնությունները և դրանց արտասանությունը, տարբերակել ձայնավոր և բաղաձայն հնչյունները, կարճ և երկար ձայնավորները, երկբարբառները, վանկային կապակցությունները՝ ամբողջական բառ ձևավորելու նպատակով:<br>- Կարողանալ տրոհել բառերը վանկերի, վանկերը՝ հնչյունների<br>-Կարողանալ ճիշտ շեշտադրել բառերը<br>-Կարողանալ ճիշտ ընկալել և խոսելիս պահպանել նախադասության տրամաբանական շեշտը<br>-Կարողանալ ճիշտ հնչերանգով արտասանել տարբեր տիպի (պատմողական, հարցական, հրամայական և բացականչական) | - Ձայնային վարժություններ. Լսել ձայնագրություններ և փորձել վերարտադրել, հնչյունները, վանկերը, բառերը արտասանել տարբեր աստիճանի բարձրության ձայնով, տարբեր արագությամբ, դանդաղ, ընդհատումներով, դադարներով և այլն, ճիշտ շեշտադրել բառերը, բառակապակցությունները:<br>Հանգավորումներ<br>Երգեր<br>Համապատասխանեցում՝ տառերի և այդ տառով սկսվող առարկայի, կենդանու, բույսի և այլ նկարների համապատասխանեցում:<br>Գրավոր առաջադրանքներ՝ տեղադրման վարժություններ,վանկերի բաժանում<br>Թելադրություն |

| | | |
|---|---|---|
| | նախադասությունները<br>-Կարողանալ ճնավորել և զարգացնել ըն-թերցանության և գրելու տեխնիկան: | |
| **Բառապաշար** | | |

| | | |
|---|---|---|
| Բառապաշարը՝ մոտ 200 բառ, հիմնականում՝ վերարտադրողական (ակտիվ) բառապաշար խոսելու և գրելու համար, այդ թվում՝<br>- բառակապակցություններ,<br>- ասացվածքներ, ասույթներ<br>- թևավոր խոսքեր | **Ընդլայնել վերարտադրողական և ընկա- լողական (պրոդուկտիվ և ռեցեպտիվ) բառապաշարը՝** նոր բառերի, բառակա- պակցությունների միջոցով:<br>Կարողանալ<br>- **գործածել** նոր յուրացրած բառապաշարը՝ խոսելիս և գրելիս, մտքերը արտահայտելու նպատակով.<br>– **ընկալել և հասկանալ** բառերն ու բառա- կապակցությունները ունկնդրելիս և ընթեր- ցելիս՝ տեղեկատվությունը ստանալու նպա- տակով: | «Բառաքարտեզ»<br>Էջի (կամ գրատախտակի) կենտրոնում գրում են տրված բառը, շուրջը՝ իմաստով դրան զուգորդվող իրենց հայտնի բառերը:<br>Բազմընտրանքային առաջադրանքներ<br>Տրված բառաշարքում գտնել՝<br>- իմաստով մյուսներին չհամապատասխանող բառը,<br>- իմաստային բառազույգերը,<br>Համադրում<br>Աշակերտները համադրում են տրված երկու բառաշարքերը:<br>- Լրացում՝ լրացնել կամ փոխարինել բառը տրված բառաշարքում կամ տեքստում:<br>Նշել նկարներին համապատասխանող բառերը, նշել նկարներին հականիշ կամ հոմանիշ բառերը:<br>- Բառախաղեր<br>- Գտի՛ր բառը |
| **Քերականություն** | | |
| Հոդ<br>անորոշ | -Կարողանալ ճիշտ օգտագործել հոդը ցույց տալով.<br>Ա) առարկայի նման առարկաների որևէ խմբին կամ դասին պատկանելը<br>բ) խոսողին և լսողին հայտնի առարկայի մասին խոսելիս | - Անհատական, զույգերով, մեծ ու փոքր խմբերով աշխատանք<br>- Կազմել աղյուսակներ՝ ըստ հոդերի<br>-Խոսքային բառախաղ՝ համապատասխան քերականական նյութին |
| **Գոյական** | | |
| **Թիվ**<br>– եզակի / հոգնակի.<br>Անձ ցույց տվող/ առարկա ցույց տվող բացառություններ<br>Հատուկ/հասարակ | -Կարողանալ կազմել և ճիշտ օգտագործել գոյականի եզակի և հոգնակի ձևերը մեկ կամ մեկից ավելի առարկա կամ անձ արտահայտելու համար | Տրված բառերը, նկարները դասավորել երկու շարքով՝ եզակի, հոգնակի<br>- Բառադարան |

| | | |
|---|---|---|
| Արաբական հոգնակի թվի նախնական ծանոթություն | -Կարողանալ տարբերակել և ճիշտ գրել հատուկ և հասարակ գոյականները | |
| **Ածական** | | |
| Գույն, չափ, ձև, որակ ցույց տվող ածականներ համեմատության աստիճանները | Կարողանալ արտահայտել անձերի, իրերի, առարկաների էական հատկանիշները:<br>-Կարողանալ համեմատել և համադրել առարկաները՝ որոշելով դրանց նմա-նությունները և տարբերությունները | - Համադրում համադրել տրված գոյականները (կամ նկարները) և դրանց համապատասխանող հատկանիշները (ածականները):<br>-Տարբերակում բառաշարքում գտնել և առանձնացնել գույն, չափ, ձև, որակ արտահայտող ածականները:<br>-Նկարագրություն նկարագրել առաջարկվող առարկաները, իրերը կամ մարդկանց՝ նշելով էական հատկանիշները:<br>- Տարբերակում համեմատել իրերը կամ մարդկանց, գտնել էական հատկանիշները՝ նշելով տարբերությունները: |
| **Դերանուն** | | |
| Նախնական ծանոթություն պարսկերենի դերանվանական համակարգի հետ՝<br>Անձնական դերանուն<br>Հարցական դերանուն<br>Ցուցական դերանուն | -Կարողանալ ճիշտ օգտագործել անձնական դերանունները խոսողին, խոսակցին և երրորդ անձին մատնանշելու համար<br>-Կարողանալ ճիշտ օգտագործել ցուցական դերանունները համապատասխանաբար մոտիկ և հեռու գտնվող առարկաներ մատնանշելու համար<br>-Կարողանալ ճիշտ օգտագործել հարցական դերանունները հարցական և | -Հարցազրույց Երկխոսություն Երեխաները զույգերով խոսում են որևէ առարկայի կամ անձի մասին՝ աշխատելով փոխարինել գոյականները դերանուններով:<br>- Տարրական զրույց վարել՝ տեղեկություններ տալով իր մասին (ով է, որտեղ է ապրում, քանի տարեկան է և այլն): Յուրաքանչյուրն ասում է, թե ինչ ունի պայուսակում («Սա իմ գիրքն |

| | | |
|---|---|---|
| | նախադասություններում | է, իմ գրիչը» և այլն): <br>- Գրավոր առաջադրանքներ. Լրացնել բաց թողնված դերանունները, գոյականները կամ հոդերը փոխարինել դերանուններով: |
| **Թվական** | | |
| Թվականը պարսկերենում քանակական բացարձակ թվական/1-10/ <br>11-20 թվականների կազմությունը(միվորը՝ նախադաս, տասնավորը՝ ետադաս) | Կարողանալ հաշվել առարկաները և արտահայտել դրանց քանակը <br><br>-Կարողանալ արտահայտել իրադարձությունների/ երևույթների թվային դասակարգումը/ հերթականությունը | - «Հաշվիր». Աշակերտները հաշվում և նախադասություններ են կազմում (Օր.՝ «Քանի՞ աշակերտ կա դասարանում, քանի՞ տղա, քանի՞ աղջիկ, քանի՞ նստարան, քանի՞ ծաղիկ, քանի՞ գիրք» և այլն): <br>-Կիրառել պաստառներ թվականների վերաբերյալ |
| **Բայ** | | |
| Բայը որպես խոսքի մաս պարսկերենում նախնական <br>Բայի եղանակներն ու ժամանակները (համապատասխան համեմատականներ անցկացնել մայրենի լեզվի հետ) | Կարողանալ խոնարհել բայերը տրված ժամանակաձևերով՝ ճիշտ օգտագործելով բայահիմքերը, դիմային վերջավորությունները | Խոնարհում <br>Գտնել բայի ներկայի հիմքը , առանձնացնել կանոնավոր և անկանոն բայերը, խոնարհել սահմանական եղանակի ներկա ապառնի ժամանակաձևով <br>Գտնել բայի անցյալի հիմքը,խոնարհել բայը սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևով <br>Կիրառել պաստառներ բայերի վերաբերյալ |
| **Նախդիր** <br>**Հետդիր** <br>**Շաղկապ** | -Կարողանալ օգտագործել նախդիրները՝ տեղ ուղղություն և ժամանակ արտահայտելու համար <br>-Կարողանալ բառակապակցություններով և նախադասություններով արտահայտված մտքերը կապակցել կամ հակադրել | - Տեղադրում <br>աղյուսակներում տրված գոյականների համար տեղադրել համապատասխան նախդիրներ, որոնք ցույց կտան տեղ, ուղղություն կամ ժամանակ, աղյուսակի սյուները ներկել համապատասխան գույներով |

| | | |
|---|---|---|
| | | Համադրում. տրված պարզ նախադասությունները, բառակապակցությունները, բառերը միացնել նախադասության իմաստին կամ հաղորդակցական նպատակին համապատասխան շաղկապներով: |
| **Տեքստերի տիպերը**<br>1. Տեքստեր՝ ունկնդրելու և խոսելու համար | **Զարգացնել ունկնդրելու և խոսելու հետևյալ կարողությունները.** | |
| -կարճ նկարագրություններ<br>-կարճ տեղեկատվական տեքստեր<br>-մանկական երգեր, բանաստեղծություններ,<br>-պարզեցված հատվածներ հեքիաթներից, պատմվածքներից<br>-կարճ երկխոսություններ<br>-ձայնագրություններ, տեսաֆիլմեր<br>-պատրաստի խոսքային նմուշներ | -Կարողանալ լսելով հասկանալ ծանոթ լեզվական նյութի հիման վրա կազմված կարճ և ոչ բարդ տեքստի հիմնական բովանդակությունը<br>-Կարողանալ լսելով հասկանալ ուսուցչի խոսքը դասարանում. պարզ հրահանգները և կատարել դրանք<br>-Կարողանալ կռահել որոշ անծանոթ բառերի նշանակությունը մայրենի կամ արդեն իմացած այլ լեզվի բառերի հետ նույն հնչողության, ծանոթ բառարմատի կամ համատեքստի հիման վրա.<br>-Կարողանալ հաղորդակցման հիմնական ոլորտների շրջանակում տարրական զրույց վարել՝ կիրառելով բարեկիրթ խոսքի հիմնական կանոնները և իրեն հայտնի խոսքային նմուշները.<br>-Կարողանալ ընկալել և հասկանալ հեքիաթների, պատմվածքների ընդհանուր բովանդակությունը՝ | - Լսել ձայնագրություններ և վերարտադրել:<br>- Դիտել տեսաֆիլմեր և պատասխանել հարցերին:<br>-Բարձրաձայն ընթերցանություն՝ ուշա-դրություն դարձնելով բառերի ճիշտ արտասանությանը, շեշտադրմանը, նախադա-սության հնչերանգին:<br>- Աշխատանք նկարների շուրջ. նկարագրել նկարը, խոսել նկարի բովանդակության մասին:<br>- Դերային խաղ<br>- Զույգերով, մեծ ու փոքր խմբերով աշխատանք. հարցեր կազմել և պատասխանել տրված հար-ցերին և այլն:<br>- Նկարագրել առարկան, երևույթը՝ պահպանելով որոշակի հաջորդականություն. օրինակ՝ առարկայի անվանումը, հատկանիշը, գործողությունը և այլն |

| | | |
|---|---|---|
| | հիմնվելով նկարի վրա<br>-Կարողանալ արտահայտել մտքերը պարզ կապակցված խոսքով /4-5 նախադասություն/<br>-Կարողանալ հարցնել և ասել նոր բառերի իմաստը և ուղղագրությունը<br>-Կարողանալ ներկայացնել ուրիշներին<br>-Կարողանալ շնորհակալություն հայտնել ինչ-որ բանի համար<br>-Կարողանալ հարցեր տալ /ինչու, ինչպես, որքան/, ինչ-որ բան խնդրել, ինչպես նաև պատասխանել /ընդունել կամ մերժել/, երբ իրենից ինչ-որ բան են խնդրում<br>-Կարողանալ պարզ տեղեկություններ հայտնել իր մասին, ընտանիքի, ընկերոջ մասին, ինչպես նաև հարցնել անձնական տվյալների մասին /անունը, ազգանունը, տարիքը, հասցեն, զբաղմունքը, նախասիրությունները և այլն/<br>-Կարողանալ պարզորեն նկարագրել հայկական և լեզվակիր ժողովրդի որոշ տոներ և դրանց հետ կապված որոշ սովորույթներ<br>-Կարողանալ խոսել անցած կատարված իրադարձությունների, գործողությունների մասին | |
| **2. Նյութեր՝ ընթերցելու համար** | **Զարգացնել ընթերցելու հետևյալ կարողությունները** | |
| Դասագրքի, լրացուցիչ գրականությունից տեքստերի | -Կարողանալ ընթերցել՝ առանձնացնելով տեքստում ը | -Բարձրաձայն ընթերցանություն՝ |

| | | |
|---|---|---|
| ընթերցում պատմվածքների, հեքիաթների, նաև բանաստեղծությունների, երգերի ու հանելուկների տեսքով | -Կարողանալ կարդալ, ընկալել տեքստի հիմնական բովանդակությունը՝ առանձնացնելով անհրաժեշտ համապատասխան հանձնարարված նյութը | ուշադրություն դարձնելով բառերի ճիշտ արտասանությանը, շեշտադրմանը, նախադասության հնչերանգին:<br>-Բարձրաձայն ընթերցանություն՝ տրված ժա-մանակամիջոցում -Ընթերցանությունից հետո կազմակերպել զրույց ընթերցած նյութի վերաբերյալ: - Աշխատանք տեքստի հետ. գտնել գլխավոր, էական միտքն արտահայտող նախա-դասությունները, գնահատել (ճիշտ է/սխալ է, դուր է գալիս/դուր չի գալիս և այլն):<br>- Խճանկար<br>վերադասավորել տեքստի խառնված նախադասությունները, վերադասավորել մասնատված տեքստի մասերի տրամաբանական հաջորդականությունը՝ հար-ցերի կամ նկարների օգնությամբ:<br>- Դերային խաղ<br>-Աշխատանք լեզվական թղթապանակով |
| **3. Տեքստեր՝ գրելու համար** | **Զարգացնել գրելու հետևյալ կարողությունները.** | |

| | | |
|---|---|---|
| -ինքնակենսագրական պարզ տեղեկություններ<br>- կարճ անձնական նամակ<br>-համառոտ գրություն ՝ մայրիկին կամ ընկերոջը<br>- շնորհավորական բացիկ<br>-փոքրիկ հոդված՝ դասարանական թերթ համար | -Կարողանալ տեքստից դուրս գրել և տեղադրել բառեր, բառակապակցություններ<br>-Կարողանալ գրել պարզ կապակցված տեքստ- շնորհավորանք /Նոր Տարվա կամ ծնդյան օրվա առթիվ/ կամ կարճ անձնական նամակ՝ հիմնվելով օրինակի վրա<br>-Կարողանալ պարզ հարցաթերթիկ /տետրի առաջին էջը/ լրացնել անձնական տվյալների մասին | -Կազմել նախադասություններ՝ տրված բառերով<br>-Լրացնել տեքստի բացթողումները<br>- Լրացնել հարցաթերթիկը<br>-Բացիկ/նամակ գրել՝ շնորհավորելով ուսուցչին, դասընկերոջը, ընտանիքի անդամներին որևէ տոնի առթիվ /ձևակերպել նամակը. ընդունված ձևով. հասցեն, նամակի սկիզբը և վերջը/<br>- Մի քանի նախադասությամբ (3-4) կապակցված տեքստ գրել տրված թեմայի շուրջ<br>- Թելադրություն<br>-Աշխատանք լեզվական թղթապանակով |

Օգտագործվող դասագիրք և լրացուցիչ գրականություն

1. Ն.Առաքելյան, Ժ.Ասատրյան, Հ.Բիանջյան, Հ.Գալստյան, Հ.Մուրադյան, Այբբենարան պարսից լեզվի, Երևան, 2006թ.

2. Գ. Մ. Նալբանդյան, Պարսից լեզվի քերականություն, Երևան, 1997թ.

3. Mohammad Farrokhi, Amuzesh-e khandane farsi be qelas-e avvaliha, Tehran, 1388

4. Rudabe Hamzei, Amuzeshe alefba ba she’r, Tehran, 1386

5. Reza Morad Sahrai, Faezeh Marsous, Davoud Maleklou, Gam-e avval, Tehran, 1396

5. Fereydun Aqbari, Ferdousi Hajiyan, Mostafa Rahman Dust, Shahin Neemat Zade, Farsi-ye avval-e dabestan, Tehran, 2015թ.

## 6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Ընթերցվում, թարգմանվում, վերարտադրվում են բարդ տեքստեր, մեծ ուշադրություն է դարձվում ուղղագրությանը, բանավոր խոսքի զարգացմանը, ամրապնդվում է անցած քերականությունը և շարունակվում նոր քերականական նյութի ուսուցում՝

Գոյական (հատուկ և հասարակ գոյականներ, գոյականի թիվը, հոլովական կարգը պարսկերենում),

Ածական (որակական, հարաբերական ածականներ, որակական ածականի համեմատության աստիճանները, պարզ, ածանցավոր, բարդ ածականներ),

Դերանուն (անձնական, կցական անձնական, անդրադարձ, ցուցական, հարցական, որոշյալ, անորոշ, ժխտական դերանուններ),

Թվական (քանակական բացարձակ թվական,դասական թվական),

Բայ (բայի ներկայի և անցյալի հիմքերը, hast բայիհանգույցի խոնարհումը, դիմային վերջավորությունները, սահմանական եղանակ՝ներկա ապառնի ժամանակաձև,անցյալ կատարյալ ժամանակաձև, հրամայական եղանակ),

Մակբայ (ընդհանուր գիտելիք՝ 1. որոշչային, 2. պարագայական մակբայներ),

Նախդիր (իսկական և իզաֆեթային նախդիրներ),

Շաղկապ (ընդհանուր գիտելիք, պարզ, բարդ շաղկապներ):

Թեմատիկ և կիսամյակային գրավոր աշխատանքները յուրաքանչյուր կիսամյակին կազմվում է ուսուցչի կողմից թեստային առաջադրանքների տեսքով՝ թեմատիկ պլանավորմամբ դասավանդված նյութերի հիման վրա:

| h/h | Թեմա | Բովանդակություն | Ժամերի քանակը 51 | Ժամերի քանակը 68 |
|---|---|---|---|---|
| 1 | کودکان شیرین زبان | Կարդալ, թարգմանել,անգիր:Բառային աշխատանք: se, sin, sad տառերի ուղղագրությունը: Թելադրություն | 2 | 2 |
| 2 | به کلاس چهارم خوش آمدید | Կարդալ, թարգմանել, պատմել: Քերականական նյութի ուսուցում՝hast բայիհանգուցի խոնարհում : | 2 | 3 |
| 3 | سعدی و حافظ | Կարդալ, թարգմանել, | 2 | 2 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | պատասխանել հարցերին, պատմել: Կենսագրական տվյալներ: Քերականական աշխատանք նյութի շուրջ՝ բայիհանգույցի կրճատ ձևերի խոնարհում: | | |
| 4 | روز جمعه | Կարդալ, թարգմանել, պատմել: Սահմանական եղանակի ներկա-ապառնի ժամանակաձևի ուսուցում: | 2 | 3 |
| 5 | کتاب | Կարդալ, թարգմանել, անգիր: Թվավոր խոսքի ուսուցում: Գոյական անուն(ամփոփում): | 1 | 1 |
| 6 | گفتگو | Կարդալ, թարգմանել, երկխոսել: Բանավոր խոսքի զարգացում: Հարցական դերանունների ուսուցում: | 2 | 2 |
| 7 | حاضر جوابی | Կարդալ, թարգմանել, անգիր: Սահմանական եղանակի անցյալ-կատարյալի ուսուցում: Be նախդրի ուսուցում՝ համեմատականներ անցկացնելով մայրենի լեզվի համապատասխան հոլովի հետ(տրական հոլովի իմաստ): | 1 | 1 |
| 8 | خانه ما | Կարդալ, թարգմանել, վերարտադրել: Ասույթի ուսուցում: Սահմանական եղանակի | 2 | 2 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ներկա-ապառնի ժամանակաձևի ամփոփում: ra հետդիրի ուսուցում՝ համեմատականներ անցկացնելով մայրենի լեզվի համապատասխան հոլովի հետ (հայցական հոլովի իմաստ): | | |
| 9 | قرار سینما | Կարդալ, թարգմանել, երկխոսել: Գոյականի հոգնակի թվի կազմությունը՝ ha հոգնակի վերջավորությամբ: ze, zal, zad, za տառերի ուղղագրությունը: Բառային աշխատանք, թելադրություն: | 2 | 3 |
| 10 | فردا | Կարդալ, թարգմանել, անգիր: Նույնարմատ բառերի ուսուցում: be նախդրի գործածությունը՝ամփոփում: | 2 | 2 |
| 11 | ورزشکاران جوان | Կարդալ, թարգմանել, վերարտադրել: Բառային աշխատանք:eyn տառի ուղղագրությունն ու արտասանությունը: Թելադրություն: | 1 | 2 |
| 12 | علاقه سارا | Կարդալ, թարգմանել, երկխոսել: Բանավոր խոսքի զարգացում:Թվական անուն, քանակական բացարձակ թվականի 10-20  ուսուցում: | 1 | 2 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 13 | باغ سبز شعرها | Կարդալ, թարգմանել: Բառային աշխատանք: ba նախդրի ուսուցում՝ համեմատականներ անցկացնելով մայրենի լեզվի համապատասխան հոլովի հետ: | 1 | 2 |
| 14 | آرزوی حسود | Կարդալ, թարգմանել, պատմել: Աոսյթի ուսուցում: gheyn, ghaf տառերի ուղղագրությունը: Թելադրություն:<br>Գոյականի հոգնակի թվի կազմությունը՝ an հոգնակի վերջավորությամբ:Հոգնակի թվի ամրապնդում: | 2 | 3 |
| 15 | روز تولد ژاله | Կարդալ, թարգմանել, պատմել: he տառերի ուղղագրությունը: Թելադրություն:Շարադրություն «Իմ ծննդյան օրը» վերնագրով: dar նախդրի ամրապնդում՝պահպանելով համեմատականները մայրենի լեզվի հետ(ներգոյական հոլովի իմաստ): | 2 | 3 |
| 16 | تولدت مبارک | Կարդալ, թարգմանել, անգիր: Բառաքերականական աշխատանք՝ հոմանիշ բառեր, կցական դերանուն: khva տառակապակցության ուղղագրությունն ու արտասանությունը: | 2 | 3 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 17 | گفتگو | Կարդալ, թարգմանել, երկխոսել:Բանավոր խոսքի զարգացում:Հրամայական եղանակի ուսուցում: | 2 | 3 |
| 18 | عید نوروز | Կարդալ, թարգմանել, պատմել:Լրացուցիչ տեղեկություններ Նոռուզի տոնի վերաբերյալ: vav տառի,o, u հնչյունների, ou դիֆթոնգի (երկհնչյունի) գրությունն ու արտասանությունը:Բառային աշխատանք: | 2 | 2 |
| 19 | شعر | Կարդալ, թարգմանել, անգիր: Ածական անունը պարսկերենում(որոկական, հարաբերական ածականներ,պարզ, ածանցավոր, բարդ ածականներ): | 2 | 2 |
| 20 | یک گفتگوی تلفنی | Կարդալ, թարգմանել,երկխոսել: Բառային աշխատանք: Որակական ածականի համեմատական աստիճանը, կազմությունը պարսկերենում: | 2 | 3 |
| 21 | تهران | Կարդալ, թարգմանել,պատմել: Բառային աշխատանք: Լրացուցիչ տեղեկություն Թեհրան մայրաքաղաքի մասին: Որակական ածականի գերադրական աստիճանը, կազմությունը պարսկերենում: | 2 | 3 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |
| 22 | خانم گرفتار | Կարդալ, թարգմանել, երկխոսել:Թվական անուն՝ քանակական թվականներ: Աշխատանք պարսկերենի բացարձակ պարզ թվականների՝ 10-1000 թվերի շուրջ: | 2 | 3 |
| 23 | حرفهای آبی | Կարդալ, թարգմանել, անգիր: Բառային աշխատանք: | 1 | 1 |
| 24 | مغازه حمید | Կարդալ, թարգմանել, պատմել: Բառային աշխատանք: Որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ կապի արտահայտումը պարսկերենում՝ իզաֆեթ, իզաֆեթային կառույցներ: | 2 | 3 |
| 25 | خرید | Կարդալ, թարգմանել: te, ta տառերի ուղղագրությունը պարսկերենում:Թելադրություն: az նախդրի ուսուցում՝ համեմատականներ անցկացնելով մայրենի լեզվի համապատասխան հոլովի հետ (բացառական հոլովի իմաստ): | 1 | 2 |
| 26 | من باغ هستم | Կարդալ, թարգմանել: Բառային աշխատանք: | 1 | 1 |
| 27 | کفاش فقیر و کیسه طلا | Կարդալ, թարգմանել, պատմել: Բառային աշխատանք: | 1 | 2 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 28 | تست آزمایشی | Թեմատիկ գրավոր աշխատանք: | 3 | 4 |
| 29 | تست ترمی | Կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանք: | 2 | 2 |
| 30 | تکرار | Կրկնողություն: | 1 | 1 |

Օգտագործվող դասագիրք և լրացուցիչ գրականություն


1. Գ. Մ. Նալբանդյան, Պարսից լեզվի քերականություն, Երևան, 1997թ.

2. Լ. Ղազարյան, Լ. Եդիգարյան, Ա. Զոհրաբյան, Վ. Փանոսյան, Qetabe farsie chharom, Երևան 2000թ.

3. Mina(1), Tehran, 1396(2017թ.)

4. Reza Morad Sahrayi, Aqram Haji Seyed Reza, Shahnaz Ahmadi Ghader, Charchub 1, Tehran,1397(2018թ.)

5. Doqtor Hoseyn Ahmadi/ Doqtor Hoseyn Anvari, Dasture zabane farsi, Tehran, 1382(2003թ.)

## 7 ԴԱՍԱՐԱՆ

Ընթերցվում, թարգմանվում, վերարտադրվում են ավելի բարդ տեքստեր, ավելի մեծ ուշադրություն է դարձվում նոր բառապաշարի ուսուցմանը, քերականությունն ավելի է ամրապնդվում: Միաժամանակ ուսուցանվում են բայական ժամանակաձևեր:

Գոյական (հատուկ և հասարակ գոյականներ, գոյականի թիվը, արաբական հոգնակին պարսկերենում ),

Դերանուն ( անձնական դերանուն ),

Բայ (բայի ներկայի և անցյալի հիմքերը, դիմային վերջավորությունները, սահմանական եղանակ՝ ներկա ապառնի ժամանակաձև, անցյալ կատարյալ ժամանակաձև, հրամայական եղանակ):

Թեմատիկ և կիսամյակային գրավոր աշխատանքները յուրաքանչյուր կիսամյակին կազմվում է ուսուցչի կողմից թեստային առաջադրանքների տեսքով՝ թեմատիկ պլանավորմամբ դասավանդված նյութերի հիման վրա:

| h/h | Թեմա | Բովանդակություն | Ժամերի քանակը 51 | Ժամերի քանակը 68 |
|---|---|---|---|---|
| 1 | فصل ها | Կարդալ, թարգմանել:<br>Պատասխանել հարցերին: | 1 | 1 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2 | پاییز | Կարդալ, թարգմանել, պատմել: Չորս տարվա եղանակների շուրջ: Ասացվածքի ուսուցում: | 2 | 2 |
| 3 | خواندن متن | Կարդալ, թարգմանել, անգիր | 1 | 1 |
| 4 | نوزاد قشنگ | Կարդալ, թարգմանել, վերարտադրել: Բառային աշխատանք: | 1 | 2 |
| 5 | گفت و شنود | Կարդալ, թարգմանել, երկխոսել: Բանավեր խոսքի զարգացում: Բառային աշխատանք: | 1 | 1 |
| 6 | میهن خویش را کنیم آباد, | Կարդալ, թարգմանել, անգիր: Ասացվածքի ուսուցում: Գոյական անուն (հատուկ և հասարակ գոյականներ): | 1 | 2 |
| 7 | سئوال و جواب | Կարդալ, թարգմանել, երկխոսել: Բանավոր խոսքի զարգացում: | 1 | 1 |
| 8 | از عمر گیاهان چه می دانید؟ | Կարդալ, թարգմանել, պատմել: Գոյականի թիվը. հոգնակի թվի ամրապնդում –an,-ha հոգնակիակերտ վեջավորությունները, արաբական հոգնակին պարսկերենում՝ նախնական տեղեկություն արաբական 1.–at, 2.-in և -un/yun, 3. Բեկյալ հոգնակիի կազմում /բառի հիմքում տեղի է ունենում փոփոխություն/ | 1 | 2 |
| 9 | حکایت ها | Կարդալ, թարգմանել, անգիր: Բառային աշխատանք: | 1 | 1 |
| 10 | گفتگو | Կարդալ, թարգմանել, երկխոսել: Բանավոր խոսքի զարգացում: | 2 | 2 |
| 11 | ساختمان ما | Կարդալ, թարգմանել, պատմել: | 2 | 2 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Բառային աշխատանք: Հանրախանութի բաժինների ուսուցում: | | |
| 12 | شعر | Կարդալ, թարգմանել, անգիր: | 1 | 1 |
| 13 | تصمیم کبری | Կարդալ, թարգմանել, պատմել: Պատասխանել հարցերին: Բառային աշխատանք: | 1 | 2 |
| 14 | ایروان | Կարդալ, թարգմանել, պատմել: Բառային աշխատանք: Զրույց Երևանի մասին: Լրացուցիչ տեղեկություն Երևան մայրաքաղաքի մասին: | 2 | 2 |
| 15 | هفته کتاب | Կարդալ, թարգմանել, պատմել: Բառային աշխատանք | 1 | 2 |
| 16 | سیب شیرین | Կարդալ, թարգմանել, անգիր: Բառային աշխատանք | 1 | 1 |
| 17 | زمستان | Կարդալ, թարգմանել: Պատասխանել հարցերին: Բառային աշխատանք: Զրույց տարվա եղանակների շուրջ: | 2 | 2 |
| 18 | درس آموزش | Կարդալ, թարգմանել, վերլուծել նախադասությունները: | 1 | 1 |
| 19 | شعر | Կարդալ, թարգմանել, անգիր: Ասացվածքների ուսուցում մայրերի վերաբերյալ: | 1 | 2 |
| 20 | داروخانه | Կարդալ, թարգմանել, պատմել: Բառային աշխատանք | 1 | 2 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 21 | حکایت ها | Կարդալ, թարգմանել: | 1 | 2 |
| 22 | کبوتر | Կարդալ, թարգմանել, պատմել:<br>Բառային աշխատանք:<br>Ասացվածքի ուսուցում: | 2 | 2 |
| 23 | فروردین ماه گلها | Կարդալ, թարգմանել, անգիր: Իրանական ամսանունների ամրապնդում: Հրամայական եղանակի ուսուցում: | 2 | 3 |
| 24 | دوران کودکی | Կարդալ, թարգմանել, պատմել: | 2 | 2 |
| 25 | فرهاد کنجکاو | Կարդալ, թարգմանել, պատմել: Սահմանական եղանակի ներկա ապառնի ժամանակաձևի ամրապնդում, բայի ներկայի հիմքը: | 2 | 4 |
| 26 | چندر ضرب المثل | Կարդալ, թարգմանել, անգիր: | 1 | 1 |
| 27 | آهو | Կարդալ, թարգմանել, պատմել: | 1 | 2 |
| 28 | گل بگو و گل بشنو | Կարդալ, թարգմանել, անգիր: | 1 | 1 |
| 29 | با حیوانات مهربان باشیم | Կարդալ, թարգմանել, վերարտադրել: Բառային աշխատանք: | 2 | 2 |
| 30 | مگس موجب انتقال بیماری می شود | Կարդալ, թարգմանել, պատմել: Սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևի ամրապնդում: Բայի անցյալի հիմքը: | 2 | 3 |
| 31 | دریا | Կարդալ, թարգմանել, անգիր:<br>Բառային աշխատանք: | 1 | 1 |
| 32 | تابستانی که گذشت | Կարդալ, թարգմանել,պատմել:<br>Բառային աշխատանք: | 2 | 3 |
| 33 | مسافر صحرا | Կարդալ, թարգմանել, պատմել: | 1 | 3 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Բառային աշխատանք:<br>Ասացվածքի ուսուցում: | | |
| 34 | تست آزمایشی | Թեմատիկ գրավոր աշխատանք: | 3 | 4 |
| 35 | تست ترمی | Կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանք: | 2 | 2 |
| 36 | تکرار | Կրկնողություն: | 1 | 1 |

Օգտագործվող դասագիրք և լրացուցիչ գրականություն


1. Գ. Մ. Նալբանդյան, Պարսից լեզվի քերականություն, Երևան, 1997

2. անՊողոսյ.Կ , Ֆ.Խոսրովյան, Սարգսյան.Վ ,Գրիգորյան.Ռ , Qetab-e farsi-ye panjom, Երևան, 2000թ

3. Mina (1), Tehran, 1396 (2017թ.)

4. Reza Morad Sahrayi, Aqram Haji Seyed Reza, Shahnaz Ahmadi Ghader, Charchub 1, Tehran 1397(2017թ.)
5. Doqtor Hoseyn Ahmadi/ Doqtor Hoseyn Anvari, Dasture zabane farsi, Tehran, 1382(2003թ.)

## 8 ԴԱՍԱՐԱՆ

Ընթերցվում, թարգմանվում են առավել բարդ տեքստեր, ավելի մեծ ուշադրություն է դարձվում նոր բառապաշարի, ինչպես նաև քերականության ուսուցմանը, ավելի է ամրապնդվում նախորդ տարիներին անցած քերականական նյութը: Աշակերտները քերականությունը սկսում են բացատրել միայն պարսկերենով: Ամրապնդվում են անցած ժամանակաձևերը, ուսուցանվում են նոր ժամանակաձևեր: Ավելի շատ են ուսուցանվում ասույթներ:

Ածական (որակական, հարաբերական ածականներ, որակական ածականի համեմատության աստիճանները, պարզ, ածանցավոր, բարդ ածականներ),

Դերանուն (անձնական դերանուն, ցուցական դերանուն),

Բայ (բայի ներկայի և անցյալի հիմքերը, դիմային վերջավորությունները, սահմանական եղանակ՝ անցյալ կատարյալ ժամանակաձև, անցյալ անկատար ժամանակաձև, ապառնի ժամանակաձև):

Թեմատիկ և կիսամյակային գրավոր աշխատանքները յուրաքանչյուր կիսամյակին կազմվում է ուսուցչի կողմից թեստային առաջադրանքների տեսքով՝ թեմատիկ պլանավորմամբ դասավանդված նյութերի հիման վրա:

| հ/հ | Թեմա | Բովանդակություն | Ժամերի քանակը 51 | Ժամերի քանակը 68 |
|---|---|---|---|---|
| 1 | فصل پاییز | Կարդալ, թարգմանել, վերարտադրել: Տարվա եղանակներն ու աշնան ամիսները: Բառային աշխատանք: Հականիշ բառերի ուսուցում: | 2 | 2 |
| 2 | نماینده کلاس ششم دبیرستان | Կարդալ, թարգմանել, պատմել: Բառային աշխատանք: Ասացվածքի ուսուցում: | 1 | 2 |
| 3 | مرغابی و لاکپشت | Կարդալ, թարգմանել, պատմել: Բառային աշխատանք: | 2 | 2 |
| 4 | آموزگار | Կարդալ, թարգմանել, անգիր: Շարադրություն «Իմ ուսուցիչը» | 2 | 2 |
| 5 | تغییرات هوا | Կարդալ, թարգմանել, պատմել: Տարվա եղանակները, յուրաքանչյուր եղանակի իրանական ամսանունների ամրապնդում: Ածական, որակական ածական, ածականի համեմատական և գերադրական աստիճանները: | 2 | 2 |
| 6 | اردک | Կարդալ, թարգմանել, պատմել: Բառային աշխատանք: | 1 | 2 |
| 7 | پسر هوشیار | Կարդալ, թարգմանել: | 2 | 2 |
| 8 | هر اخلاقی قابل حل است | Կարդալ, թարգմանել, պատմել: | 1 | 3 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Դերանուն, անձնական դերանուն: | | |
| 9 | امید | Կարդալ, թարգմանել, անգիր: Բառային աշխատանք: | 1 | 1 |
| 10 | داستان ابریشم | Կարդալ, թարգմանել, պատմել: | 1 | 2 |
| 11 | مشکلی که آسان بود | Կարդալ, թարգմանել, պատմել: Բառային աշխատանք: Ասույթի ուսուցում: | 2 | 2 |
| 12 | حوس پنجگانه | Կարդալ, թարգմանել, պատմել: | 1 | 1 |
| 13 | مجسمه داویت ساسونی | Կարդալ, թարգմանել, պատմել: Լրացուցիչ տեղեկություն Սասունցի Դավթի մասին: | 2 | 2 |
| 14 | همدان | Կարդալ, թարգմանել, վերարտադրել: Բառային աշխատանք: Լրացուցիչ տեղեկություն Իրանի նահանգներ, մեծ և կարևոր քախաքների մասին: Բայ, բայի գործածությունը նախադասության մեջ: | 1 | 2 |
| 15 | ابوعلی سینا | Կարդալ, թարգմանել, վերարտադրել: Բառային աշխատանք: | 2 | 2 |
| 16 | پسربچه شیطان | Կարդալ, թարգմանել: Բառային աշխատանք: | 1 | 1 |
| 17 | مرا بهتر بشناسید | Կարդալ, թարգմանել, պատմել: Բառային աշխատանք: Բայ, սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակ, բայի եզակի և հոգնակի թվով | 2 | 3 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | խոնարհումը: | | |
| 18 | ایران | Կարդալ, թարգմանել, պատմել: Իրան, Իրանի աշխարհագրական դիրքը, հարևան պետությունները, մայրաքաղաքը, ամենաբարձր լեռնագագաթը, մեծ, կարևոր քաղաքները: Սլայդերի պատրաստում: | 2 | 3 |
| 19 | سپیده دم | Կարդալ, թարգմանել: Բառային աշխատանք: | 1 | 1 |
| 20 | نمک | Կարդալ, թարգմանել, վերարտադրել: Սահմանական եղանակի ներկա ապառնի ժամանակի, անցյալ կատարյալ ժամանակի ամփոփում, բայերի խոնարհում: Սահմանական եղանակի ապառնի ժամանակի ուսուցում՝ կազմությունը, խոնարհումը: | 1 | 2 |
| 21 | دریاچه سوان | Կարդալ, թարգմանել, պատմել: Լրացուցիչ տեղեկություն Սևանա լճի մասին, սլայդերի պատրաստում: | 2 | 2 |
| 22 | یک روز مهم | Կարդալ, թարգմանել, պատմել: | 1 | 2 |
| 23 | مهربانترین | Կարդալ, թարգմանել, անգիր: | 2 | 2 |
| 24 | تعطیلی | Կարդալ, թարգմանել, պատմել: | 1 | 1 |
| 25 | مادر | Կարդալ, թարգմանել, անգիր: Բառային աշխատանք: | 2 | 2 |
| 26 | ضرب المثلها | Կարդալ, թարգմանել, անգիր: Բայի դիմային վերջավորություններն անցյալ ժամանակում: | 2 | 2 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 27 | داستان کلاغ تشنه | Կարդալ, թարգմանել, պատմել: | 1 | 2 |
| 28 | اندرزها | Կարդալ, թարգմանել, անգիր: | 1 | 2 |
| 29 | مولا نصرالدین و گدا | Կարդալ, թարգմանել, անգիր: Բառային աշխատանք: | 1 | 2 |
| 30 | عضو نتفس | Կարդալ, թարգմանել, պատասխանել հարցերին: | 1 | 2 |
| 31 | آب باران | Կարդալ, թարգմանել, պատմել: Բառային աշխատանք: | 1 | 1 |
| 32 | سگ تمهکار | Կարդալ, թարգմանել, պատմել: Բառային աշխատանք: | 1 | 2 |
| 33 | تست آزمایشی | Թեմատիկ գրավոր աշխատանք: | 3 | 4 |
| 34 | تست ترمی | Կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանք: | 2 | 2 |
| 35 | تکرار | Կրկնողություն: | 1 | 1 |

Օգտագործվող դասագիրք և լրացուցիչ գրականություն

1. Գ. Մ. Նալբանդյան, Պարսից լեզվի քերականություն, Երևան, 1997թ.
2. Սարգսյան.Վ ,Վարդանյան.Ս ,Գրիգորյան.Ռ, Qetab-e Farsi-ye sheshom, Երևան, 2000թ.
3. Mina (1), Tehran, 1396 (2017թ.)

4. Reza Morad Sahrayi, Aqram Haji Seyed Reza, Shahnaz Ahmadi Ghader, Charchub 1, Tehran, 1397(2017թ.)
5. Doqtor Hoseyn Ahmadi / Doqtor Hoseyn Anvari, Dasture zabane farsi, 1382 (2003թ.)
6. Doqtor Ziya Taj Odin, Khandan /Amuzeshe zabane farsi be gheyre farsi zabanha/, Tehran, 1382

9 ԴԱՍԱՐԱՆ

Ընթերցվում, թարգմանվում, վերարտադրվում են ծավալուն, բարդ տեքստեր, մեծ ուշադրություն է դարձվում նոր բառապաշարի, ինչպես նաև քերականական նոր նյութի դասավանդմանը: Ամրապնդվում է նաև անցած քերականական նյութը: Ուսուցանվում են նոր ժամանակաձևեր: Դասերն ուղեկցվում են ասույթների ուսուցմամբ:

Ածական (որակական, հարաբերական ածականներ),

Դերանուն (անձնական, անդրադարձ ),

Թվական (քանակական բացարձակ թվական, դասական թվական, կոտորակային թվական, բաշխական թվական),

Բայ (բայի ներկայի և անցյալի հիմքերը, դիմային վերջավորությունները, սահմանական եղանակ՝ ներկա ապառնի ժամանակաձև, անցյալ կատարյալ ժամանակաձև, հրամայական եղանակ, անցյալ անկատար ժամանակաձև, վաղակատար ժամանակաձև, անցյալ վաղակատար ժամանակաձև),

Բայի սեռի քերականական կարգը, ներգործական և կրավորական սեռի բայեր՝ համեմատականներ անցկացնելով մայրենի լեզվի հետ:

Թեմատիկ և կիսամյակային գրավոր աշխատանքները յուրաքանչյուր կիսամյակին կազմվում է ուսուցչի կողմից թեստային առաջադրանքների տեսքով՝ թեմատիկ պլանավորմամբ դասավանդված նյութերի հիման վրա:

| h/h | Թեմա | Բովանդակություն | Ժամերի քանակը 51 | Ժամերի քանակը 68 |
|---|---|---|---|---|
| 1 | توانا بود هر که دانا بود | Կարդալ, թարգմանել, անգիր: Լրացուցիչ տեղեկությու՝ Ֆիրդուսի, կյանքն ու գործնեությունը: | 2 | 3 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Բառային աշխատանք: Սահմանական եղանակի ներկա ապառնի ժամանակաձև: Բայերի խոնարհում: Բայի սեռի քերականական կարգը, ներգործական սեռի բայեր՝ համեմատականներ անցկացնելով մայրենի լեզվի հետ: | | |
| 2 | کتاب, کتابخانه کلاس | Կարդալ, թարգմանել, պատմել, անգիր: Պատասխանել հարցերին: Բառային աշխատանք: Ասացվածքի ուսուցում: Սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձև: Բայերի խոնարհում: Բայի սեռի քերականական կարգը, կրավորական սեռի բայեր՝ համեմատականներ անցկացնելով մայրենի լեզվի հետ: | 2 | 3 |
| 3 | شهر ما خانه ما | Կարդալ, թարգմանել, պատմել: Պատասխանել հարցերին: Գոյական՝ հատուկ գոյականներ: Թվական. 1. քանակական թվական, 2. Դասական թվական, 3. Կոտորակային թվական, 4. բաշխական թվական: Դասական թվականի կազմությունը: | 1 | 3 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4 | حکایات,چند سخن از سعدی | Կարդալ, թարգմանել, վերարտադրել: Բառային աշխատանք: Սաադու կենսագրությունը: Ասացվածքի ուսուցում: Հրամայական եղանակ: Սահմանական եղանակի անցյալ անկատար ժամանակաձևի կազմությունը: Բայերի խոնարհում: | 2 | 2 |
| 5 | ایروان | Կարդալ, թարգմանել, պատմել: Բառային աշխատանք: Սլայդերի պատրաստում Երևան քաղաքի մասին: Սահմանական եղանակի վաղակատար ժամանակաձևի ուսուցում: Բայերի խոնարհում վաղակատար ժամանակաձևով: | 2 | 3 |
| 6 | جغرافیای ایران | Կարդալ, թարգմանել, պատմել: Ամբողջական տեղեկություն Իրան երկրի մասին: | 2 | 3 |
| 7 | مثل | Կարդալ, թարգմանել: Բառային աշխատանք: | 1 | 2 |
| 8 | آرزوی ثروت | Կարդալ, թարգմանել, պատմել, պատասխանել հարցերին: Անդրադարձ դերանունը պարսկերենում: | 2 | 2 |
| 9 | حضرت نوح | Կարդալ, թարգմանել, պատմել: Բառային աշխատանք: | 1 | 2 |
| 10 | حکایات | Կարդալ, թարգմանել, պատմել: | 1 | 2 |
| 11 | چشم بینا و گوش شنوا داشته باشیم | Կարդալ, թարգմանել, պատմել: Բառային աշխատանք: | 1 | 3 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Ասացվածքի ուսուցում: Սահմանական եղանակի անցյալ վաղակատար ժամանակաձևի կազմությունը: Բայերի խոնարհում: | | |
| 12 | فصل زمستان | Կարդալ, թարգմանել, պատմել: Բառային աշխատանք: | 2 | 2 |
| 13 | عبور از خیابان | Կարդալ, թարգմանել, պատմել: Բառային աշխատանք: Հատուկ և հասարակ գոյականներ: | 2 | 2 |
| 14 | من پوستین را رها کردم | Կարդալ, թարգմանել, վերարտադրել: Բառային աշխատանք: Հրամայական եղանակի կազմությունը՝ կրկնություն: Բայերի խոնարհում: | 2 | 3 |
| 15 | اسب | Կարդալ, թարգմանել, պատմել: Պատասխանել հարցերին: | 1 | 1 |
| 16 | مادر | Կարդալ, թարգմանել, անգիր: Բառային աշխատանք: | 2 | 2 |
| 17 | انقلاب اسلامی ایران | Կարդալ, թարգմանել, վերարտադրել: Զրույց հեղափոխության մասին: | 3 | 3 |
| 18 | درختکاری | Կարդալ, թարգմանել: | 1 | 1 |
| 19 | فصل بهار | Կարդալ, թարգմանել, պատմել: | 2 | 2 |
| 20 | حکایات,ترانه بهار | Կարդալ, թարգմանել, անգիր: Բառային աշխատանք: | 2 | 2 |
| 21 | فردوسی | Կարդալ, թարգմանել, պատմել: Բառային աշխատանք: | 2 | 2 |
| 22 | بیا تا جهان را ببد نسپاریم | Կարդալ, թարգմանել, անգիր: | 2 | 2 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Բառային աշխատանք: | | |
| 23 | هر چیز که خوار آید یک روز بکار آِد | Կարդալ, թարգմանել, պատմել: | 1 | 1 |
| 24 | سعدی | Կարդալ, թարգմանել, պատմել: Բառային աշխատանք: | 2 | 2 |
| 25 | اولین کتاب چاپی و چاپخانه در ایران | Կարդալ, թարգմանել, պատմել: Բառային աշխատանք: | 1 | 2 |
| 26 | شهر باستانی شیراز | Կարդալ, թարգմանել,պատասխանել հարցերին, պատմել: Բառային աշխատանք: | 2 | 2 |
| 27 | تو را سپاس ای آموزگار | Կարդալ, թարգմանել, անգիր հատվածներ: Բառային աշխատանք: | 2 | 2 |
| 28 | تست آزمایشی | Թեմատիկ գրավոր աշխատանք: | 3 | 4 |
| 29 | تست ترمی | Կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանք: | 2 | 2 |
| 30 | تکرار | Կրկնողություն: | 1 | 1 |

## Օգտագործվող դասագիրք և լրացուցիչ գրականություն


1. Գ. Մ. Նալբանդյան, Պարսից լեզվի քերականություն, Երևան, 1997թ

2. Վ.Վ ,Բակունց.Փարսադանյան, Մաթոսյան.Ս, Qetab-e Farsi-ye haftom,
Երևան,  2000թ.

3.  Mina(1), Tehran, 1396 (2017թ.)

4. Reza Morad Sahrayi, Aqram Haji Seyed Reza, Shahnaz Ahmadi Ghader, Charchub 1, Tehran, 1397(2017թ.)

5. Doqtor Hoseyn Ahmadi / Doqtor Hoseyn Anvari, Dasture zabane farsi, Tehran, 1382(2003թ.)

6. Doqtor Ziya Taj Odin, Khandan /Amuzeshe zabane farsi be gheyre farsi zabanha/, Tehran, 1382